

պատմիչն Կիլիկիոյ, եթէ՝ «Առաջնորդէր նմա (Հեթմոյ) աբեղայ մի Բարսեղ անուն, որ եւ բազում անգամ ճանապարհ արարեալ էր ընդ այն պողոտայ»:

104. Գէորգ Սկեւռացի.– Քեռին յիշեալ՝ է ինքն մեծ վարդապետն Գրիգոր Սկեւռացի:– ԶԳէորգայ երկասիրութիւնս՝ բազում գովութեամբ եւ յաւելուածով նշանակէ ժամանակագիր մեր, վկայելով զնա եւս լինել Առաջնորդն Սկեւռայ, այր փիլիսոփայ եւ կատարեալ իմաստասէր եւ անուանի: Սա գեղեցկադիր եւ ամենայարմար յոգնագունակ բայիք եւ ճոխական իմաստիք զարդարեաց զամենայն աստուածաշունչ, զնուրբ եւ զընդարձակ, զհին եւ զնոր կտակարանս Հայոց եկեղեցոյն. ընդ որս եւ զԱւետարանն՝ նախադրօք, գլխօք եւ ցանկօք յորդեաց, եւ ՚ի վերայն դաս ասաց. եւ զՍաղմոսն նոյնպէս արարեալ, որ լաւ օրինակ է, այժմ գտանի առ մեզ, եւ աւելին ՚ի վերայ՝ կարմիր գրով. յաւել եւ ՚ի Տօնացոյցս եւ ՚ի ժամանակագրութիւնս՝ ուղղակի, որ Գոյն երիցանց կոչեցաւ: Այս բան ցուցանէ ինձ՝ կարմրադէղով նշանակեալ Գէորգայ զայլայլութիւնս բանից կամ բառից ՚ի սաղմոսս եւ յայլ ժամագիրս, որք զի քահանայից կամ երիցանց ՚ի պետս էին, կոչեցաւ Գոյն երիցանց, յորմէ ածանցեալ է եւ մականուն ճարտար գրչին Ստեփանոսի:

106. Սկեւռայ վանաց Միաբանք.– Յիշեալդ ՚ի միաբանս վանացս՝ առ Կոստանդեալ կաթողիկոսի, կամ որիշ յայնցանէ՝ է Ստեփանոս քահանայ ծեր, որ յամի 1295 ընդօրինակէր անդ աւետարան մի՝ «Ընդ հովանեաւ Ս. Փրկչիս եւ կենսակիր Ս. Նշանիս, եւ մօր Լուսոյ Աստուածածնի, որ է առընթեր անմատոյց դղեկիս Լամբրունի... (եւ աղաչէր յիշել զինքն) զտառապեալ եւ զմեղաւոր գծօղս. եւս եւ զեղբօրորդիս իմ, զՅովհաննէս քահանայ եւ զԼեւոն սարկաւագ, եւ զՅովսէփ պատանի. վասն զի ՚ի խնդրոյ սոցին ՚ի պակասեալ ամաց եւ ՚ի զառանցեալ տիոց եւ ՚ի ծերութեան հասակի, շնորհօք բարերարին Աստուծոյ՝ աւարտեցի զսա... Յիշել ՚ի Քրիստոս եւ զհարազատ եղբայր իմ զԿոստանդին, որ ՚ի սոյն ամի վախճանեցաւ, եւ սուգ անբերելի եթող մեզ ... եւ ստընդիա մանկանց նորին խը... պակասէ հետեւորդն. սկիզբն թերատ բառին խը՝ թուի նշանակել խնամակալ զինքն կացուցեալ: